

ՀԱՄԱՄ ԱՐԵՒԵԼՑԻՆ ԵՒ ՆՐԱ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Վանո Եղիազարեան

Հայագիտութեան մէջ Համամ Արեւել-
ցուն անդրադարձել են Մ. Չամչեանը¹, Ս.
Սոմալեանը², Գ. Զարբհանալեանը³, Ե. Դու-
րեանը⁴, Կ. Կոստանեանը⁵, Մ. Բարխուդա-
րեանը⁶, Ղ. Ալիշանը⁷, Յ. Մարկուարտը⁸,
Հ. Աճառեանը⁹, Ն. Ադոնցը¹⁰, Գ. Զահու-

կեանը¹¹, Ա. Յովհաննիսեանը¹², Վ. Հացու-
նին¹³, Աս. Մնացականեանը¹⁴, Պ. Խաչատ-
րեանը¹⁵, Ն. Պողարեանը¹⁶, Ս. Բարխուդա-
րեանը¹⁷, Հ. Սիմոնեանը¹⁸, Բ. Ուլուբաբեա-
նը¹⁹, Կ. Քիպարեանը²⁰, Հ. Թամրազեանը²¹,
Հ. Սվազեանը²²; Յ. Քեօսէեանը²³, Ա.
Եղիազարեանը²⁴, Ա. Յակոբեանը²⁵, Շ. Վրդ.

- 1 Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց, հտ. 1, Եր., 1985, էջ 18, հտ. 2, Եր., 1984, էջ 689, 717:
- 2 Somalian Placido Sukias, Quadro della storia letteraria di Armenia, Venezia, 1829, էջ 53:
- 3 Զարբհանալեան Հ. Գ., Հայկական հին դպրու-
թեան պատմութիւն (Դ-ԺԳ դար), Վենետիկ,
1897, էջ 785:
- 4 Դուրեան Ե., Պատմութիւն հայ մատենագրու-
թեան վաղ ժամանակաց մինչեւ մեր օրերն, Կ.
Պոլիս, 1885, էջ 40:
- 5 Կոստանեանց Կ., Համամ Արեւելցի, Վաղարշա-
պատ – Ս. Էջմիածին, 1896, 30 էջ:
- 6 Բարխուդարեանց Մ. եպ., Պատմութիւն Աղուա-
նից, հտ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 162-164,
նաեւ Նոյնի՝ Արցախ, Բագու, 1895, էջ 98:
- 7 Ալիշան Ղ., Հայապատմութիւն, հտ. Ա, Վենետիկ,
1901, էջ 510, Նոյնի՝ Ժիրակ, Վենետիկ, 1881, էջ
96-97:
- 8 Marquart J., Osteuropäische und ostasiatische
Streifzüge, ethnologische und historisch-topogra-
phische Studien zur Geschichte des 9. und 10. Jahr-
hunderts, Leipzig 1903, էջ 391-465, նաեւ՝ Մար-
կուարտ Յ., Բագրատունեաց ծագումը: Ա. Հայ
Բագրատունեաց ճիւղագրութիւնը, Բ. Վրական
Բագրատունեաց ծագումը, Գերմաներէնէ թարգ-
մանց Հ. Մ. Հապոզեան, Վիեննա, 1913, էջ 47-57:
- 9 Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան,
հտ. Գ, Եր., 1946, էջ 23-25:
- 10 Ադոնց Ն., Երկեր, հտ. Ա, Պատմագիտական ու-
սումնասիրութիւններ, Եր., 2006, էջ 506-514:
- 11 Զահուկեան Գ., Քերականական եւ ուղղագրա-
կան աշխատութիւնները հին եւ միջնադարեան
Հայաստանում (Ե-ԺԵ դդ.), Եր., 1954, էջ 198-202:
- 12 Յովհաննիսեան Ա., Դրուագներ հայ ազատա-
գրական մտքի պատմութեան, հտ. Ա, Եր., 1957,
էջ 120-121:

- 13 Հացունի Վ., Պատմութիւն Հայոց աղօթամա-
տոյցին, Վենետիկ, 1965, էջ 222:
- 14 Մնացականեան Աս., Աղուանից աշխարհի գրա-
կանութեան հարցերի շուրջը, Եր., 1966, էջ 181-
210:
- 15 Խաչատրեան Պ., Հայ միջնադարեան պատմա-
կան ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.), Եր., 1969, էջ 55, նաեւ՝
Գանձարան հայ հին բանաստեղծութեան, աշ-
խատասիրութեամբ Պ. Խաչատրեանի, Եր., 2000,
էջ 76, 887, նաեւ՝ Նոյնի՝ Հայ հին գրականութեան
մատենագիտութիւն, Եր., 2016, էջ 226-229:
- 16 Պողարեան Ն., Հայ գրողներ, Երուսաղէմ, 1971,
էջ 128-130:
- 17 Բարխուդարեան Ա., Արցախի, Ծաքիի եւ Փառի-
սուի իշխանութիւնները 9-10-րդ դդ., «Պատմա-
բանասիրական հանդէս», 1971, թիւ 1, էջ 58-72,
Նոյնի՝ Страницы из истории Арцаха и Армяно-
албанских отношений, Ер., 2011, էջ 56-90:
- 18 Սիմոնեան Հ., Հայ միջնադարեան կաֆաներ,
Եր., 1975, էջ 27, 32:
- 19 Ուլուբաբեան Բ. Ա., Խաչենի իշխանութիւնը X-
XVI դարերում, Եր., 1975, էջ 66-83:
- 20 Քիպարեան Կ., Պատմութիւն հայ հին գրակա-
նութեան, Վենետիկ, 1992, էջ 368:
- 21 Թամրազեան Հ., Հայ քննադատութիւն, գիրք Բ,
Եր., 1985, էջ 177:
- 22 Սվազեան Հ., Աղուանից աշխարհի պատմու-
թիւն, Եր., 2006, էջ 259-260:
- 23 Տէ՛ս Մատենագիրք Հայոց, հտ. Թ., Ամթիլիաս-
Լիբանան, 2008, էջ 449-452:
- 24 Եղիազարեան Ա., Աղուանից թագաւորութեան
պատմութեան որոշ խնդիրների շուրջ, «Հանդէս
Ամսօրեայ», 2009, թիւ 1-12, էջ 137-170:
- 25 Յակոբեան Ա., Խաչէն-Խօխանաբերդ ամրոցը եւ
նրա իշխանատոհմը Թ.-ԺԳ. դարերում, «Հան-
դէս Ամսօրեայ», 2010, թիւ 1-12, էջ 71-171:

Անանեանը²⁶, Հ. Բախչինեանը²⁷, Վ. Եղիազարեանը²⁸ եւ այլն:

Սոյն յօդուածի խնդրոյ առարկան Համամ Արեւելցոլ ազգութեան շուրջ աղբբջանական գիտութեան մէջ ձեւաւորուած եւ շարունակուող կեղծ տեսութեան հերքումն է: Յօդուածի նպատակն է գիտական փաստերով հիմնաւորել Համամ Արեւելցոլ հայ չիւնելու մասին տեսութեան սնանկութիւնը, ինչով պայմանաւորուած է աշխատանքի արդիականութիւնը: Մեր խնդիրն է՝ գիտականօրէն գնահատել ինչպէ՛ս աղբբջանական գիտութեան ներկայացրածը, այնպէ՛ս էլ հայագիտութեան փաստարկները: Յօդուածում կիրառել ենք պատմական, արժեքանական (աքսիոլոգիական), մեկնաբանական (հերմենեւտիկա) մեթոդները: Գիտական նորոյթը Համամ Արեւելցոլ մասին նոր համակարգուած փաստերով հայագիտութեան դրոյթների արդարացիութիւնը հիմնաւորելն է:

ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՄԻ ՄԱՍԻՆ

Համամ Արեւելցոլն իրենց երկերում անդրադարձել են Յովհաննէս Դրասխանակերտցին (10-րդ դար), Անանիա Մոկացին (10-րդ դար), Մովսէս Դասխուրանցին՝ կոչուած նաեւ Կաղանկատուացի (10-րդ դարի վերջ), Ստեփաննոս Տարօնեցի Ասողիկը (10-11-րդ դդ.), Վարդան Արեւելցին (13-րդ դար), Մխիթար Այրիվանեցին (13-րդ դար), Ստեփաննոս Օրբէլեանը (13-րդ դար), ինչպէս նաեւ որոշ օտարազգի պատմիչներ:

Համամի մասին հնագոյն վկայութիւններից մէկը թողել է «Աղուանից աշխարհի

պատմութիւն» երկի հեղինակ Մովսէս Դասխուրանցին. «Ապա բարեպաշտ Համամը, որը եղաւ նաեւ Աղուանքի թագաւոր, նոյնպէս Աղուանքի կործանուած թագաւորութիւնը վերականգնեց, ինչպէս Աշոտ Բագրատունին նորոգեց հայոց թագաւորութիւնը: Սրանք միեւնոյն ժամանակ կատարուեցին. նոյն ինքը՝ Համամը, Աստուծո նկատմամբ գործած մեծամեծ յանցանքների պատճառով, որը այս փուլ կեանքի համար իր եղբօր արեան պարտքը իր վրայ էր առել, ուրախութեամբ ու անընդհատ մեծամեծ բարեգործութիւններ կատարեց եկեղեցու բոլոր կարօտեալների ու չքաւորների հանդէպ. նաեւ հայոց մեծ հայրապետ Գեւորգին ազատել տուեց անօրէն արաբների բանտից, մեծ գանձեր նուիրելով եւ նրան բազմաթիւ մեծարանքներ ցոյց տալով՝ ողջ-առողջ Հայաստան ուղարկեց»²⁹:

Յովհաննէս Դրասխանակերտցին եւս վկայում է, որ «Արեւելքի մեծ իշխան» Համամն է ազատել գերութեան մէջ գտնուող կաթողիկոսին. «Եւ Սմբատ արքայի հրամանով անմիջապէս ուղեւորուեցինք Արեւելքի մեծ իշխան Համամի մօտ: Քանի որ ոստիկանը այդ ժամանակ հասել էր Փայտակարան քաղաքը՝ իր հետ տանելով մեծ կաթողիկոսին, եւ այնտեղ ժամանելիս մերօրոնք շտապ հասան նրան: Իսկ նա [Համամը] խնդրում է իրեն տալ հայրապետին՝ եւ առնում է: Նա ուղարկուած գանձի վրայ աւելացնում է նաեւ իրենը ու տալիս է տանելու ոստիկանին: Եւ հաւատի պաշտպանութեամբ ու փափագով տեսնելով մեծ հայրապետին, իշխանը մարմնաւոր կարիքները ամբողջապէս բաւարարելով հեռաւոր

26 Անանեան Ծ., Համամ Արեւելցի՝ մեկնիչ Սուրբ գրոց, «Էջմիածին», 2009, Ե, էջ 48-58, Անտէ՛նոյնի՝ Համամ Արեւելցի՝ թագաւոր, թէ՞ մատենագիր, «Էջմիածին», 2011, Գ, էջ 38-55:

27 Բախչինեան Հ., Ծարականի գրապատմական ուղի (5-14-րդ դարեր), Եր., 2012, էջ 139-140, Անտէ՛ն Բախչինեան Հ., Հայ միջնադարեան բանաստեղծությունը, հտ. Ա, Եր., 2021, էջ 152-154:

28 Եղիազարեան Վ., Հայ հին գրականութեան պատմություն, Եր., 2014, էջ 413-420:

29 Մովսէս Կաղանկատուացի, Պատմություն Աղուանից աշխարհի, Թարգմանությունը, առաջաբանը եւ ծանօթագրությունները Վարազ Առաքելեանի, Եր., 1969, էջ 262-263:

օտարութեան մէջ եւ պաշտամունքի կարգով սպասաւորելով, նրան [կաթողիկոսին] ուղարկում է Հայաստան»³⁰:

Ուշագրաւ է, որ Դրասխանակերտցու կողմից իշխան անուանուած Համամին Ստեփաննոս Տարոնացի Ասողիկը, ինչպէս եւ Դասխուրանցին, անուանում է Աղուանքի թագաւոր. «Սա այն Ափշինն էր, որը գերի տարաւ Տէր Գէորգին, որին գնեց Աղուանքի Համամ թագաւորը»³¹:

Ստեփաննոս Ասողիկը Համամ Արեւելցուն յիշատակում է նաեւ որպէս Աշոտ Բագրատունուն ժամանակակից մատենագիր. «Եւ Համամ Արեւելցի, որ զվերլուծութիւն Առակացն գրեաց եւ Յովբայ զ'Ո՛վ է դայն թարգմանեաց եւ զաւրհնութիւնսն որ ի գլուխս սաղմոսացն ասացեալ, գիրս մի, եւ զԱմբիծսն գիրս մի եւ Վերլուծութիւն քերականին»³²:

Անանիա Մոկացի կաթողիկոսը յիշատակում է Համամի անունը որպէս բարեխօս Գեւորգ Գառնեցի կաթողիկոսի մօտ Աղուանից Յունան կաթողիկոսի Համար, ինչը յետոյ քաղում է նաեւ Ստեփաննոս Օրբէլեանը. «Իսկ իշխանն Գրիգոր աղաչէր, զի զԳագիկ երկրորդ անգամ ձեռնադրեալ թողումք նմա, աւրինակ մեզ տալով եւ աւճ անհաւանութեան զարարեալ տեառն Գէորգայ Հայոց կաթողիկոսի առ Յունան Աղուանից կաթողիկոս, ի ձեռն երանելոյ թագաւորին Համամայ բարեխաւսութեան»³³:

Անանիա Մոկացին նաեւ յիշատակում է Համամի որդու եւ թոռան անունները. «Իշխանակ որդի տեառն Ատրներսէհի,

թոռն երանելոյն Համամայ բարեպաշտ թագաւորին Աղուանից»³⁴:

Վարդան Արեւելցին «Տիեզերական պատմութեան» մէջ նշում է, որ Համամը Աշոտ թագաւորի եւ Գեւորգ կաթողիկոսի ժամանակակիցն է. «Նրա ժամանակ ապրում էր Համամը, որը կատարեց Առակների եւ Քերականի մեկնութիւնը, թարգմանեց Յոբի «Ո՛վ է դա» գիրքը, Սաղմոսների գրքի մի գլխի օրհնութիւնները եւ Անբիծ մի գիրք»³⁵:

Մխիթար Այրիվանեցին Համամին անուանում է Յովհաննէս Բագրատունի. «Համամ, որ եւ Յովհաննէս Բագրատունի, մեկնեաց զԱռակսն եւ եղ զվերջի գուրդայսն ՚ի գլուխ Սաղմոսացն»³⁶:

Ստեփաննոս Օրբէլեանը եւս գրում է, որ Համամն Աղուանքի թագաւորն էր, երբ ազատեց Գեւորգ կաթողիկոսին. «Իսկ երբ Գէորգը Աղուանքի թագաւոր Համամի միջոցով վերադառնում է գերութիւնից, տեսնում է Յովնանին նրանց արքեպիսկոպոս եւ հրամայում է հանել նրա զգեստներն ու կաթողիկոսական նշանները: Այդ պատճառով էլ Համամը նրա առջեւ ընկնելով, ներում է խնդրում: Եւ կաթողիկոսը լսում է նրան՝ իր մեծ երախտիքի Համար, ու Յովնանին նորից ձեռնադրում է Աղուանքի

30 Յովհաննէս Դրասխանակերտցի, *Հայոց պատմութիւն*, Աշխարհաբար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Գ. Բ. Թոսումեանի, Եր., 1996, էջ 175:

31 Ստեփաննոս Ասողիկ Տարոնացի, *Տիեզերական պատմութիւն*, Թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Վ. Հ. Վարդանեանի, Եր., 2000, էջ 211:

32 Տե՛ս Մատենագիրք Հայոց, րո. ԺԵ, Եր., 2011, էջ 741:

33 Մատենագիրք Հայոց, րո. Ժ, Եր., 2011, էջ 262:

34 Անդ, էջ 258:

35 Վարդան Արեւելցի, *Տիեզերական պատմութիւն*, Աշխարհաբար թարգմանութիւնը, ներածութիւնը եւ աստղանիշներով ծանօթագրութիւնները Գ. Բ. Թոսումեանի, Եր., 2001, էջ 126:

36 Մխիթարայ Այրիվանեցոյ *Պատմութիւն Հայոց*, Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 55, նաեւ՝ Մխիթարայ Այրիվանեցոյ *Պատմութիւն Ժամանակագրական*, Ի լոյս ընծայեաց Բ. Պատկանեան, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 70:

արքեպիսկոպոս եւ թողնելով այնտեղ գնում է իր սեփական աթոռը»³⁷:

Աւելին՝ Ստեփաննոս Օրբէլեանը նաեւ Համամի թագաւոր օծուելը համարում է ընդդէմ Սմբատ Բագրատունի թագաւորի կատարուած քայլ. «Իսկ երկար ժամանակ անց, երբ դուռ բացեցին նախ Արծրունինները՝ թագադիր լինելով ընդդէմ հայոց թագաւոր Սմբատի, թագադիր եղան նաեւ Վրաց բռնչիւ Ատրնեբսէհն ու Աղուանից Համամը, Ափշինը մեծարանքով [առաջարկեց] թագադիր լինել Վասակ Սիւնիին, բայց սա չկամեցաւ ապստամբի անուն վաստակել»³⁸:

Ամփոփելով հայ մատենագիրների վկայութիւնները՝ կարող ենք փաստել.

1. Համամն Արեւելքի մեծ իշխան է եղել (ըստ Դրասխանակերտցու):

2. Բարեպաշտ Համամը, Աշոտ Բագրատունու նման վերականգնել է Աղուանքի կործանուած թագաւորութիւնը (ըստ Դասխուրանցու):

3. Համամը եղել է Աղուանից թագաւոր (ըստ Անանիա Մոկացու, Դասխուրանցու, Ստեփաննոս Տարօնացի Ասողիկի, Ստեփաննոս Օրբէլեանի):

4. Համամը սպանել է իր եղբորը՝ «այս փուչ կեանքի համար իր եղբոր արեան պարտքը իր վրայ» առնելով (ըստ Դասխուրանցու):

5. Հայոց մեծ հայրապետ Գեւորգին ազատել է արաբ ոստիկանի գերութիւնից՝ մեծ գանձեր նուիրելով դրա դիմաց (ըստ Դրասխանակերտցու, Դասխուրանցու, Ստեփաննոս Տարօնացի Ասողիկի):

6. Համամն Աղուանքի թագաւորն էր, երբ ազատեց Գեւորգ կաթողիկոսին (ըստ Ստեփաննոս Օրբէլեանի):

7. Աշոտ թագաւորի եւ Գեւորգ կաթողիկոսի ժամանակակից Համամը հեղինակն է Առակների եւ Քերականի մեկնութեան, թարգմանել է Յոբի «ո՞վ է դա» գիրքը, Սաղմոսների գրքի մի գլխի օրհնութիւնները եւ անբիծ մի գիրք (ըստ Վարդան Արեւելցու):

8. Մատենագիր Համամը նոյն ինքը Յովհաննէս Բագրատունին է՝ Առակների եւ Սաղմոսների մեկնութեան հեղինակը (ըստ Մխիթար Այրիվանեցու):

Ինչպէս պարզ տեսանելի է, մեր մատենագիրների վկայութիւնները Համամի մասին չունեն որեւէ հակասութիւն եւ ամենեւին առիթ չեն տալիս տարանջատելու Համամ Արեւելցի թագաւորին եւ մատենագիրին, քանի որ դրանք նոյն անձն են³⁹:

Հայ հին գրականութիւնը ըստ էութեան մեր ազնուականութեան գրականութիւնն է: Համամ Արեւելցի թագաւորը բացառութիւն չէ մեզանում, եւ դա միակ դէպքը չէ, որ հայոց թագաւորը կամ իշխանը նաեւ մատենագիր է, այդպիսին են նախամաշտոցեան շրջանում Վրոյր բանաստեղծը, Արտաւազդ Բ թագաւորը, իսկ 7-րդ դարից սկսած՝ հայ աշխարհիկ ազնուականութիւնը հոգեւորականութեանը զուգահեռ ստեղծագործել է հոգեւոր թեմաներով, ինչի վկայութիւնն Աշոտ պատրիկ Բագրատունի հայ իշխանի հոգեւոր երգն է, որն ընդգրկուել է հայկական «Շարակնոց»-ի մէջ, նաեւ՝ Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունու դաւանաբանական թղթերը, որոնք մտել են «Գիրք թղթոց» ժողովածոյի մէջ:

37 Ստեփանոս Օրբէլեան, Սիւնիքի պատմութիւն, Թարգմանութիւնը, Անթուրիւնը եւ Ծանօթագրութիւնները Ա. Ա. Աբրահամեանի, Եր., 1986, էջ 244:

38 Ամր, էջ 256:

39 Այս մասին Աշ. Յովհաննիսեանը գրում է, թէ «Բագրատունեաց մեկնիչին Այրիվանեցին չի

նոյնացնում նրան ժամանակակից Աղուանից Համամ թագաւորի հետ» (Յովհաննիսեան Ա., Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, հտ. Ա, էջ 120), սակայն պէտք է նկատել, որ Այրիվանեցին չի էլ տարբերում թագաւորին մատենագրից:

Աւելին՝ 9-րդ դարում Համամի աւագ սերնդակիցն էր Արցախի իշխան Եսայի Ապու-Մուսէն, որն աշխարհիկ երգի հեղինակ է։ Աւանդոյթը շարունակուել է նաեւ զարգացած միջնադարում. յայտնի են 10-րդ դարի մատենագիր Գագիկ Բ Բագրատունի թագաւորը, 13-րդ դարում՝ Կիլիկիայի թագաւոր Լեւոն Գ-ն եւ այլն։

ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՄ ԱՐԵՎԵԼՑՈՒ ՄԱՍԻՆ

Հայագիտութեան մէջ Համամի մասին առաջին յիշատակութիւնը դեռեւս 1784 թ. Միքայէլ Չամչեանցի անդրադարձն է։ Նա հայ պատմիչների ցանկում Կաղանկատուացուց յետոյ յիշատակում է «Համամ վարդապետ», որին յաջորդում է Մխիթար Անեցին⁴⁰։ Ապա իր «Հայոց պատմութեան» Բ. հատորում Մ. Չամչեանցը Ջաքարիա Ջագեցի կաթողիկոսի (855-876) ժամանակակիցն է համարում Համամ Արեւելցուն՝ երկրորդելով նրա հայոց պատմիչ լինելը. «...էր աւուրս սորա Համամ վարդապետ՝ կոչեցեալ Արեւելցի, որ ըստ ասելոյ Ասողկայ՝ գրեաց զմեկնութիւն Առակաց, եւ Ուլ է դային Յոբայ, եւ օրհնութեանց եղելոց յաւարտ ութն կանոնացն Սաղմոսաց. եւս եւ մեկնութիւն ի վերայ քերականութեան՝ զոր յիշատակէ նաեւ Յովհան Երզնկացի. արար եւ զպատմութիւն ինչ ի վերայ ազգիս հայոց, զոր զանց առնէ յիշել Ասողիկ»⁴¹։

Հ. Գարեգին Ջարբհանալեանը, Համամին հայոց պատմիչ համարելով, գրում է, թէ նրա պատմութիւնը «կորսուած կը համարուի»⁴²։

Համամին նուիրուած առանձին ուսումնասիրութիւն է տպագրել Կարապետ

Կոստանեանցը, նախ՝ «Արարատ» ամսագրում, ապա՝ 1896 թ. առանձին գրքոյկով, ուր հայագէտն ապացուցում է, որ Համամ Արեւելից թագաւորը եւ մատենագիրը նոյն անձն են. «Հայոց պատմիչների տուած տեղեկութիւնները չեն վերաբերում թ. դարում ապրող երկու ժամանակակից անձների, այլ միեւնոյն մի՛անձի, այն է՝ Արեւելից աշխարհի մեծ իշխան Համամին, որ Բագրատունեաց տոհմից է»⁴³։

Ինչպէս տեսնում ենք, Կ. Կոստանեանցը Համամին համարում է Բագրատունեաց տոհմի շառաւիղ. «Մխիթար Այրիվանեցին նորա անունն յիշելիս ասում է «Համամ, որ եւ Յոհանէս Բագրատունի»։ այս թեթեւ յիշատակութիւնից երեւում է, որ Համամ Արեւելցին Բագրատունեաց տոհմից էր»⁴⁴։

Կ. Կոստանեանցը Համամի ստեղծագործութիւնների շարքում յիշատակում է նաեւ մի պատմութիւն՝ գրելով. «...աչքի առաջ ունենալով, որ Հայոց պատմիչներից ոչ մէկը Համամի անունը տալիս, յիշում է նորա պատմական գրուածքի մասին, եւ որ մեր տեղեկութիւնն հիմնուած է միմիայն Մ. Չամչեանի մեզ ծանօթ աղբիւրի վերայ»⁴⁵։

Համամին Բագրատունի է համարում նաեւ Մակար Բարխուդարեանցը. «Համամ-Յովհաննէսն ծագմամբ Բագրատունի իշխաններից է եւ ոչ թէ Աղուանից»⁴⁶։

Համամին անդրադարձել է նաեւ Հ. Ղեւոնդ Ալիշանը՝ առանց փաստերով հիմնաւորելու ընդունելով, որ Համամ Արեւելցի անունով մէկից աւելի հեղինակներ կան. «...հաւանօրէն մէկէ աւելի հեղինակք եղած են այս անուամբ ծանօթագոյնն՝ որոյ եւ գրուածք ինչ մնան՝ մականուանի Արեւելցի, Հայոց աշխարհին արեւելեան կողմէն

40 Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց, հտ. Ա, էջ 18։

41 Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց, հտ. Բ, էջ 689։

42 Ջարբհանալեան Հ. Գ., Հայկական Ռիմ դպրութեան պատմութիւն (Դ-ԺԳ դար), էջ 785։

43 Կոստանեանց Կ., Համամ Արեւելցի, էջ 28։

44 Անդ, էջ 1։

45 Անդ, էջ 26։

46 Բարխուդարեանց Մ. եպ., Պատմութիւն Աղուանից, էջ 163։

ըլլալով, կամ Աղուանից: Իր աւելի կամ պակաս մասամբ գործերն են՝ քանի մի Ս. Գրոց մեկնութիւնք, ինչպէս՝ Սողոմոնի Առակաց, Յովբայ գրոց քանի մի բանից, եւ այլն: Իրեն թուի եւ Քերականի մեկնութիւն մը, ուստի Յովհաննէս Երզնկացի քանի մի կարճ հատուած պատած է իր ընդարձակ մեկնութեան մէջ»⁴⁷:

Սակայն Ալիշանը Համամի անունով շարականը համարում է Արեւելից իշխան Համամի գործը. «Կայ եւ ողբական շարական մի՝ անուանը գրերու կարգաւ տնագլուխ ըրած, բայց այս մեծ իշխանի մի գրուած է, որ անիրաւ սպանութիւն մը ըրած կամ՝ ընել տուեր է (եղբոր կամ մերձաւորի), եւ յետոյ զղջալով գրեր եւ երգեր է, եւ գտնուի քանի մի Հին օրինակաց մէջ»⁴⁸:

Հետեւելով Մ. Զամչեանցին՝ Հ. Ղ. Ալիշանն ընդունում է, որ Համամ Արեւելցին ունեցել է նաեւ մի պատմութիւն. «Սակայն պատմագիր Համամայ մը եղած ըլլալն անտարակոյս կ'երեւի պատմաց լաւագոյն ցանկը գրողէն, այն որ վախճուել եւ երկու պատմագիրք Հայոց եղած են կ'ըսէ»⁴⁹:

Հակուած լինելով տարանջատել Համամ թագաւորին եւ մատենագրին՝ Հրաչեայ Աճառեանը գրում է, որ Համամ հայոց անձնանունը ծագել է արաբերէն համամ բառից, որ նշանակում է «վալորի աղաւնի»⁵⁰: Նա տպագրում է նաեւ Համամի շարականը՝ նկատելով, որ այս երգի «ծայրանունն է Համամ»⁵¹: Հեղինակը Համամ Արեւելցի թագաւորին վերագրում է Բագրատունեաց ծագում, աւելին՝ թագաւորին համարում է

եղբոր սպանութեան մեղաւորը. «...իր մեղքը քաւելու համար՝ Համամը շատ բարեգործութիւններ է անում, որի համար էլ ստանում է «բարեպաշտ» կոչումը»⁵²:

Նիկողայոս Ադոնցը Համամ Բարեպաշտին նոյնացնում է արաբական աղբիւրներում յիշատակուող Մուաւիա-Յովհաննէսին՝ վերջինիս համարելով Բագրատունի⁵³, իսկ Մուաւիա անունը «որպէս աղաւաղում հայ Համամի»⁵⁴: Հեղինակը կարծում է, թէ շատ «հաւանական է, որ այս հեղինակը նոյն Համամ թագաւորն է, թէեւ մատենագիրների լուծութիւնը այս մասին երաշխիք չէ այս ենթադրութեան»⁵⁵:

Հետեւելով Հ. Աճառեանին՝ Գեւորգ Զահուկեանը հակուած է տարբերելու թագաւորին ու մատենագրին⁵⁶, ինչն ընդունել է նաեւ Աշոտ Յովհաննիսեանը:

Համամին ու նրա ստեղծագործութեանը հանգամանօրէն անդրադարձել է նաեւ Ասատուր Մնացականեանը՝ հերքելով Զ. Բունիաթովի կողմից անհիմն կերպով Համամին որպէս թուրք յիշատակելու անհեթեթ կեղծիքը:

Հ. Նորայր Պողարեանը Համամ Արեւելցու անունը յիշատակել է հայ գրողների շարքում՝ նրա ժամանակը համարելով մօտաւորապէս 825-890 թթ.⁵⁷: Մինչդեռ Ս. Բարխուդարեանը Համամի ապրած ժամանակը դնում է 810-900 թթ. միջակայքում:

Բագրատ Ուլուբաբեանը Համամ Բարեպաշտին չի նոյնացնում Մուաւիա-Յովհաննէսին⁵⁸, ինչն անում է Ն. Ադոնցը, որին էլ հետեւել է Ս. Բարխուդարեանը: Վերջինս գրում է. «Սահլին յաջորդում է

47 Ալիշան Ղ., Հայաստանում, Բու. Ա., էջ 510:

48 Անդ:

49 Անդ:

50 Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, Բու. Գ., էջ 22:

51 Անդ, էջ 24:

52 Անդ:

53 Ադոնց Ն., Երկեր, Բու. Ա., Պատմագիտական ուսումնասիրություններ, էջ 510-511:

54 Անդ, էջ 510:

55 Անդ, էջ 512:

56 Զահուկեան Գ., Քերականական եւ ուղղագրական աշխատությունները հին եւ միջնադարեան Հայաստանում (Ե-ԺԵ դդ.), էջ 198-199:

57 Պողարեան Ն., Հայ գրողներ, էջ 128:

58 Ուլուբաբեան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 73:

նրա որդի Համամը. հայկական աղբիւրներում նա յիշատակուում է Համամ եւ Յովհաննէս անուններով, իսկ արաբականում՝ Մուաւիէ»⁵⁹: Հեղինակը նաեւ բերում է անունը ալլընթերցութեան արաբական աղբիւրներից. «Տաբարիի մօտ Մուաւիա է կարգացում, Հաուկալի մօտ՝ Համային ձեւն ունի, իսկ Իբն-ալ-Ասիրը՝ Մուաւիա եւ «Առանի պատրիկ» է կոչում»⁶⁰: Ս. Բարխուդարեանը նաեւ կազմել է Համամի տոհմացանկը, ըստ որի՝ նրա նախապապն է Աշոտ Բագրատունին, որին յաջորդում է Սմբատ Բագրատունին, Համամի հայրն է Սահլ Սմբատեանը⁶¹, որի որդիներն են՝ Համամ-Յովհաննէսը, Փիլիպպէն, Սմբատը, Համամին յաջորդում են որդին՝ Ատրնեբսէհը եւ նրա որդի Իշխանիկը. վերջին երկուսը եւս եղել են Շաքիի թագաւորներ⁶²:

Բ. Ուլուբաբեանը միանում է այն պատմաբաններին, որոնք Համամ Բարեպաշտին նոյնացնում են Ատրնեբսէհի որդի Գրիգորին⁶³, աւելին՝ Համամ վարդապետին էլ տարբերում է Համամ Բարեպաշտից⁶⁴:

Արման Եղիազարեանի կարծիքով՝ Համամին չպէտք է նոյնացնել ոչ Սահլի Յովհաննէս որդուն, ոչ էլ Ատրնեբսէհի Գրիգոր որդուն, քանզի «Համամը, պէտք է, որ Յովհաննէսի որդին եղած լինի»⁶⁵:

Կիւրեղ Քիպարեանն առանց որեւէ հիմնաւորման պարզապէս գրում է. «ապահովաբար ուրիշ անձ է Համամ Արեւելցի

կոչուածը, որու կ'ընծայուին մեկնութիւններ մը Առակաց գիրքին, Յորի «Մ'վ է դա» կտորին, մէկ քանի սաղմոսներու եւ հուսկ՝ քերականական գրութեան»⁶⁶:

Յակոբ Քէօսէեանի դիտարկմամբ՝ նոյն անձն են թագաւորն ու մշակութային գործիչը («Համամ Յովհաննէս Արեւելցին ունեցել է Աղուանքի ինչպէս քաղաքական, այնպէս էլ մշակութային կեանքում») ⁶⁷: Նա շարունակում է. «Համամի եղբայրը զոհ է դնացել արաբական բռնապետութեան նենգ դաւերին, որոնց մէջ իր ականաւոր մասնակցութիւնն է ունեցել նաեւ Համամը»⁶⁸, եւ ինչպէս երեւում է, «այս ծանր հոգեվիճակը ստիպում է Համամին թողնել արքայական գահը (այն գիշերով եղբորը՝ Փիլիպպէն, եւ որդուն՝ Ատրնեբսէհին) եւ նուիրուել վանական կեանքին, հոգեւոր-մշակութային գործունէութեանը»⁶⁹:

Այսպիսով, Համամին Բագրատունի են համարել Հ. Ղ. Ալիշանը, Յ. Մարկուարտը, Ն. Ադոնցը, Հ. Աճառեանը, Ս. Բարխուդարեանը, Հ. Բախչինեանը, մինչդեռ Առանշահիկ են համարել Բ. Ուլուբաբեանը, Ա. Եղիազարեանը, Հ. Սվադեանը եւ այլն: Վերջին տեսակէտի համար հիմք է դարձել Մովսէս Դասխուրանցու կողմից Համամի հայր Սահլի՝ Արցախի Առանշահիկների տոհմի շառաւիղը լինելու մասին վկայութիւնը. «Սահլի Սմբատեան Եռանշահիկն տէր»⁷⁰:

59 Բարխուդարեան Ս., Արցախի, Ծաքիի եւ Փառխոսի իշխանութիւնները 9-10-րդ դդ., էջ 64:

60 Աճառ:

61 Տեղիմ մշեմք, որ Միքայէլ Ասորու երկի հայերէն թարգմանութեան մէջ Սահլը յիշատակում է՝ որպէս հայկազուն, այսինքն՝ հայ («Սահլակ իշխանն Հայկազուն»): Տե՛ս Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորոյ պատրիարքի, Երուսաղէմ, 1871, էջ 365, հմմ. Յակոբեան Ա., Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչեւ ԺԳ դար (Պատմա-աղբիւրագիտական քննութիւն), Եր., 2020, էջ 176-177:

62 Բարխուդարեան Ս., Արցախի, Ծաքիի եւ Փառխոսի իշխանութիւնները 9-10-րդ դդ., էջ 72:

63 Ուլուբաբեան Բ., Խաչենի իշխանութիւնը X-XVI դարերում, էջ 75:

64 Աճառ, էջ 77:

65 Եղիազարեան Ա., Աղուանից թագաւորութեան պատմութեան որոշ խնդիրների շուրջ, - «Համդէս Ամսօրեայ», 2009, թիւ 1-12, էջ 165:

66 Քիպարեան Կ., Պատմութիւն հայ հին գրականութեան, էջ 368:

67 Մատենագիրք Հայոց, հտ. Թ, էջ 449:

68 Աճառ:

69 Աճառ:

70 Մատենագիրք Հայոց, հտ. ԺԵ, էջ 403:

Բացի այս՝ Կ. Կոստանեանցը, Աս. Մնացականեանը, Ս. Բարխուդարեանը, Պ. Խաչատրեանը, Հ. Բախչինեանը, Յ. Քէօսէեանը, Վ. Եղիազարեանը ընդունում են, որ Համամ թագաւորն ու մատենագիրը նոյն անձն են, իսկ Հ. Աճառեանը, Գ. Զահուկեանը, Աշ. Յովհաննիսեանը, Բ. Ուլուբաբեանը, Ա. Եղիազարեանը, Շ. Անանեանը հակուած են թագաւորին ու մատենագրին տարբեր անձինք համարելու:

Համամի խնդրի շուրջ երկու յօդուած է հրատարակել Շահէ արեղայ Անանեանը՝ առաջինում ընդունելով, որ թագաւորն ու մատենագիրը նոյն անձն են, իսկ երկրորդում պնդել է հակառակը: Նա գրում է. «Յովհաննէսի եւ Համամի անձերի շփոթութիւնը հիմնուած է Մխիթար Այրիվանեցու մի վկայութեան, ինչպէս նաեւ Ա. Մնացականեանի կողմից վերհանուած մի քանի ձեռագիր տեղեկութիւնների վրայ»⁷¹: Հեղինակն անտեսել է Աս. Մնացականեանի կողմից հիմնաւոր ներկայացուած այն փաստերը, ըստ որոնց ապացուցուած է, որ շարականի հեղինակը եւ մատենագրութեան հեղինակը նոյն անձն են: Շ. Անանեանն ընդունում է, որ թագաւորն է շարականի հեղինակը, սակայն տուեալ պարագայում թագաւոր շարականագրին ու մատենագրին տարանջատելն անհամոզիչ է, մանաւանդ որ Աս. Մնացականեանը բերում է համոզիչ ապացոյցներ, ինչպէս, օր.՝ «Համամ, որ եւ Յովհաննէս Բագրատունի, մեկնեաց զԱռակսն եւ եղ զվերջի գուրդայսն ի գլուխ Սաղմոսացն»⁷² (վկայակոչելով Մխիթար Այրիվանեցուն)⁷³: Աւելին՝ Աս. Մնացականեանը յիշատակում է նաեւ 14-րդ դարում գրչագրուած Մաշտոցեան

Մատենադարանի հմ. 2152 ձեռագրից հետեւեալ հատուածը.

«Հարց - Ո՞վ է Համամն՝ Առակաց մեկնիչն:

Պատասխան - Բագրատունեաց իմաստասէր արեղայ Յովհաննէս անունն:

Հարց - Զի՞նչ արարեալ:

Պատասխան - Զվերջին գործողայքսնա է կարգել ի Սաղմոսին վերայ եւ զքերականն մեկնեալ»⁷⁴:

Այս վկայակոչումները հիմնաւոր ապացուցում են, որ Համամ թագաւորը նոյն ինքը մատենագիրն է: Աւելին, վկայակոչելով «Պատմութիւն Աղուանից» երկի «վասն սնտոի այս կենացս զպարտ արեան եղբաւրն ժողովեալ յանձին իւրում»⁷⁵ խօսքերը եւ Յովհաննէս Դրասխանակերտցու Պատմութիւնից Համամի մասին յիշատակումները՝ Աս. Մնացականեանը հաստատում է այն փաստը, որ թագաւորն է շարականի հեղինակը, որում զղջում է եղբոր սպանութեան համար: Նա նաեւ վկայակոչում է «Մեկնութիւն Առակաց Սողմոնի» երկում եղբայրասպանութեան գաղափարին Համամի անդրադառնալը, աւելին՝ Համամ ծայրակապով շարականի եւ առակների մեկնութեան որոշ ոճական նմանութիւններ է ներկայացնում, ինչպէս՝ շարականի «Երագեցի հեղուլ զարիւն եղբաւրն» եւ Առակներից՝ «Երագին ոտք հաղորդիլ արեան մահու» (հմ. նաեւ շարականից՝ «Կոչեցին զիս հաղորդիլ արեան մահու», եւ Առակներից՝ «Եթէ կոչեցեն զքեզ... կցորդ լեր արեան») ⁷⁶: Աւելին՝ Աս. Մնացականեանը նաեւ Քերականի մեկնութեան որոշ բանաստեղծական հատուածներ է ի ցոյց դնում,

71 Անանեան Շ., Համամ Արեւելցի՝ թագաւոր, թէ՞ մատենագիր, - «Էջմիածին», 2011, Գ, էջ 43:

72 Մնացականեան Աս., Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջը, էջ 185:

73 Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, էջ 55:

74 Մնացականեան Աս., Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջը, էջ 185:

75 Մատենագիրը Հայոց, հտ. ԺԵ, էջ 414:

76 Մնացականեան Աս., Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջը, էջ 189:

նաեւ այդ մեկնութեան մէջ այբուբենի տառերի ծայրակապն է վկայակոչում՝ որպէս բանաստեղծականութեան արտայայտութիւն⁷⁷, ինչով հաստատուում է, որ շարականագիր թագաւոր Համամը եւ քերականութեան մեկնութեան հեղինակ Համամ Արեւելցի մատենագիրը միեւնոյն անձն են:

Ի վերջոյ, Աս. Մնացականեանը գրում է. «...ինչպէս երեւում է, Դաւթակ Քերթոզի, Կոմիտասի, Ստեփանոս Սիւնեցու սիրած ակրոստիքոսային եղանակը շատ է սիրել նաեւ Համամ Արեւելցին, ուստի նրա մօտ էլ առկայ են հայոց այբուբենով հիւստուած ուշագրաւ նմուշներ: Եւ եթէ Դաւթակ Քերթոզի մօտ Ա-Ք-ի ձգտող շարքը լոկ ձեւական է, ապա Համամ Արեւելցու մօտ տառերը բառային իմաստ ունեն եւ այդ պատճառով էլ, թէ՛ ձեւով եւ թէ՛ բովանդակութեամբ, նրանք ձուլուած են ընդհանուր խօսքին: Այստեղ թէկուզեւ անհիմն ձեւով խօսք անգամ չի կարող առաջանալ նրանց թարգմանուած լինելու մասին, որովհետեւ դրանք չափուած են հայոց այբուբենի վրայ»⁷⁸:

Այս ամենից յետոյ էլ Շ. Անանեանը կրկին փորձում է առանձնացնել Համամ թագաւորին եւ մատենագիրին: Աւելին՝ նա գտնում է, որ «Ստեփանոս Տարօնեցի Ասողիկը, որ մէկ դար յետոյ խօսում է թագաւորի եւ մատենագրի մասին առանձին-առանձին, ոչինչ չի ասում դրանց միջեւ առկայ կապի վերաբերեալ: Հնարաւոր է, ուրեմն, որ յետագայի մեր մատենագիրները չփոթել են այս երկու բոլորովին տարբեր պատմական անձերին՝ հաշուի առնելով նրանց երկուսի բարեկարգչական եւ քաղաքական ձեռնարկները Հիւսիսային Հայաստանում եւ Աղուանքում: Այս վերջին դիտարկմանն ուղղակիօրէն առնչւում է նաեւ

Համամի դինաստիական ծագման հարցը: Վերը տեսանք, որ ՄՄ հ. 2152 ձեռագիրը եւ Մխիթար Այրիվանեցու ժամանակագրութիւնը Համամին դիտում են իբրեւ Բագրատունեաց հարստութեան ներկայացուցիչ»⁷⁹:

Հարկ է շեշտել, որ Ստեփանոս Ասողիկի վկայութիւններն ամենեւին էլ հիմք չեն տալիս պնդելու, թէ թագաւորը եւ մատենագիրը տարբեր անձեր են: Այսպէս՝ մի դէպքում Ասողիկը Աշոտ Բագրատունու թագաւորութեան ժամանակի մասին գլխում Աշոտի ժամանակի հայ մատենագիրների շարքում յիշատակում է Սահակ Ապիկուրեշի եւ Համամ Արեւելցու անունները՝ իրենց ստեղծագործութիւններով⁸⁰, միւս դէպքում, անմիջապէս յաջորդ գլխում՝ Աշոտին յաջորդած Սմբատի ժամանակի մասին խօսելիս յիշատակում է այն փաստը, որ արդէն Աղուանից թագաւոր դարձած Համամ գերութիւնից ազատել է Գեւորգ կաթողիկոսին⁸¹: Ակնյայտ է, որ այս պարագայում չի կարելի պնդել, թէ «...յետագայի մեր մատենագիրները չփոթել են այս երկու բոլորովին տարբեր պատմական անձերին», այն դէպքում, երբ դրանք ամենեւին էլ տարբեր անձեր չեն, այլ Աշոտի ու Սմբատի ժամանակակից Համամ Արեւելցին, որը մի դէպքում որպէս մատենագիր է յիշատակւում, միւս դէպքում՝ որպէս թագաւոր, ով փրկել է Գեւորգ կաթողիկոսին:

Քննութեան առնելով Համամի նախորդներին եւ սերունդներին՝ Շ. Անանեանը եզրակացնում է, որ Համամ Արեւելցի թագաւորը եւ Համամ մատենագիրը տարբեր անձեր են, սակայն այնուամենայնիւ ընդունում է, որ Համամի եղբօր սպանութեան առթիւ գրուած զղջական շարականը Համամ Արեւելցի թագաւորի հեղինակած

77 Անդ, էջ 189-190:

78 Անդ, էջ 195-196:

79 Անանեան Շ., Համամ Արեւելցի՝ թագաւոր, թէ՛ մատենագիր, էջ 47:

80 Տե՛ս Մատենագիրք Հայոց, Բու. ԺԵ, էջ 741:

81 Անդ, էջ 743:

երգն է. «Այնուամենայնիւ, վերոյիշեալ շարականը թերեւս միակ երկն է, որ կարելի է առաւել կամ պակաս չափով վերագրել Աղուանքի մեծ իշխան-թագաւորին՝ իբրեւ քաղաքական դաւադրութիւնների արդիւնքում կատարուած եղբայրասպան արարք եւ դրանից բխող զղջման արտայայտութիւն»⁸²: Կրկնենք, որ աւելի վաղ, հետեւելով հայագիտութեան աւանդոյթին՝ Շ. Անանեանը Համամ Արեւելցի մատենագրին եւ թագաւորին համարել է մեկ անձ եւ ներկայացրել նրա երկասիրութիւնների ցանկը:

Մատենագիր հեղինակին անուանելով Կեղծ Համամ՝ Շ. Անանեանն այժմ նրան է վերագրում լոկ Առակաց գրքի եւ Սաղմոսների մեկնութիւնը⁸³, ինչի մասին վկայել են Ստեփաննոս Ասողիկն ու Մխիթար Այրիվանեցին: Նա նոյն Կեղծ Համամ հեղինակին է վերագրում նաեւ քերականական, մեկնաբանական (Առակաց գրքի մի մեկնութիւն, Դիոնիսիոս Արիոպագագու երկերի մի լուծմունք) եւ երաժշտաբանական երկեր⁸⁴: Աւելին, Շ. Անանեանը փորձում է տարբերակել նաեւ նոյնանուն երկու անձների 9-րդ դարում. «Այսպիսով, Աղուանից պատմութեան թատերաբեմի վրայ 853/854-894/895 թթ. միջեւ կարելի է բաւարար յստակութեամբ առանձնացնել երկու իրարից տարբեր պատմական անձերի՝ Յովհաննէս Մուաւիային՝ Աղուանք-Առանի իշխան, եւ Համամ Արեւելցուն՝ Մեծ իշխան, այնուհետեւ Աղուանքի թագաւորութեան վերականգնող եւ թագաւոր»⁸⁵:

Հարկ է նշել, որ մատենագիր Համամը իշխանն ու թագաւորն է, եւ դրանց տարբեր անձեր համարելն անընդունելի է, քանզի

882 թ. որպէս իշխան յիշատակուող Համամը, բնականաբար, 894 թ. կարող էր դառնալ թագաւոր, ով արաբ ոստիկան Բուղայի հարկադրանքով, ինչպէս ինքն է հաստատում նաեւ իր շարականում, սպանել է կրտսեր եղբօրը, ինչի համար զղջական երգ է գրել՝ ՀԱՄԱՄ ծայրակապով:

Շ. Անանեանի կարծիքը մեզ համոզիչ չի թւում նաեւ այն պատճառով, որ հայոց ընտրախաւային գրականութիւնը դարեր ի վեր զարգացել է ոչ միայն գրագէտ հոգեւորականների շնորհիւ, այլ նաեւ թագաւորների ու իշխանների:

ՀԱՄԱՄԻ ԱՆՁԸ, ԺԱՄԱՆԱԿԸ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Համամ Արեւելցին (Համամ Բագրատունի, Համամ Բարեպաշտ, Համամ-Յովհաննէս⁸⁶ (մօտ 850 – մօտ 920)) ծնուել է մօտ 9-րդ դարի կէսին, ապրել եւ գործել է Գեւորգ Բ. Գառնեցի կաթողիկոսի (877-897) օրօք: Բագրատունիների ազնուական տոհմից է (ոմանց կարծիքով՝ Առանշահիկների), յիշատակում է որպէս իշխանաց իշխան (882-883), նաեւ՝ Աղուանից թագաւոր (ոմանց կարծիքով՝ Հայոց Արեւելից կողմանց)՝ 894-895: Ըստ Մովսէս Դասխուրանցու՝ Բարեպաշտ Համամը, Աշոտ Բագրատունու նման վերականգնել է Աղուանքի կործանուած թագաւորութիւնը:

Ըստ Մովսէս Դասխուրանցու, Յովհաննէս Դրասխանակերտցու եւ Ստեփաննոս Ասողիկի՝ Համամը 894 թ. Ափշինի գերութիւնից փրկագնել է Գեւորգ Բ. Գառնեցի կաթողիկոսին՝ մեծ գանձեր նուիրելով դրա դիմաց: Ըստ Ստեփաննոս Օրբէլեանի՝ Համամն

82 Անանեան Շ., Համամ Արեւելցի՝ թագաւոր, թէ՞ մատենագիր, էջ 45:

83 Անդ, էջ 50:

84 Անդ, էջ 53:

85 Անդ:

86 Ըստ Բ. Ուրուբաքեանի՝ նաեւ Համամ Գրիգոր: Համամի Գրիգոր իշխանի հետ նոյնացնելով՝

հեղինակը նաեւ կարծում է, թէ Համամ անունը Գրիգոր անուն արաբերէն թարգմանութիւնն է. Գրիգոր նշանակում է արթուն, հսկող, զգոն, իսկ արաբերէն Համամը նոյն արմատն ունի՝ լինել զգոն, հոգատար:

արդէն Աղուանքի թագաւորն էր, երբ ազատեց Գեւորգ կաթողիկոսին: Նա նաեւ խաղաղարար դեր է կատարել Աղուանից եւ Հայոց եկեղեցիների միջեւ առկայ տարաձայնութիւնների հարթեցման գործում:

Որոշ ուսումնասիրողների կարծիքով Համամ Արեւելիցին նշանաւոր դէմք է եղել Հայոց Արեւելից կողմանց պատմութեան մէջ. նա է կառուցել Հաւքախաղաց բերդը Տրտուի աջ ափին, տիրել Արցախ-Նաչն աշխարհին եւ 9-րդ դարում արաբների դէմ մղուած պայքարին ակտիւ մասնակցութիւն ունեցել Առանշահիկների Եսայի Ապու-Մուսէ իշխանի նման: Իբրեւ թէ Հայոց Արեւելից կողմանց թագաւորութիւնն ընդգրկել է Արցախի, Ուտիքի, Կամբեճանի ողջ տարածքը: Բաւականին տարածուած նոյն տեսակէտի համաձայն՝ պահպանուել են Համամի 2 արձանագրութիւնները. մէկը՝ Մեծ Մազրայում 881-ին կանգնեցուած խաչարձանի վրայ, միւսը՝ «Համամ» անունով եւ առանց թուագրութեան, Տիգրանակերտի աւերակների մօտ գտնուող Դաշտային Արցախի Սոփուլու գիւղի մօտակայքում: Ս. Բարխուդարեանի կարծիքով այս «...տապանագիրը նոյնպէս առնչուում է Համամի գործած ոճրի հետ, միաժամանակ մատնացոյց անելով սպանուած եղբոր թաղման վայրը (հին Պարտաւ քաղաքից ոչ հեռու) եւ ապա պարզում, որ Համամը բացի սպանուածից ունեցել է նաեւ Փիլիպէ եւ Մնպատ անունով եղբայրներ, որոնց մասին այլուստ տեղեկութիւններ չկան»⁸⁷:

Ա. Շահինեանի ընթերցման մասին տեղեկ չլինելով՝ Շ. արեղայ Անանեանը գրում է, թէ Արցախի Տիգրանակերտ քաղաքի մօտակայքում պահպանուած դամբարանագիրը նուիրուած է Համամի կրտսեր եղբորը, ով սպանուել է Համամի կողմից՝ արաբ ոստիկան Բուղայի շրջամամբ. «Մահապատժի մասին են վկայում նաեւ 4-րդ տողում արձանագրուած խօսքերը՝ իրենց առանձնայատուկ արգելական շեշտադրումով: Մեզ է հասել նաեւ անվաւեր մի շարական՝ նոյնպէս վերագրուած Համամին (այդ մասին է վկայում նաեւ շարականի ծայրակայքը՝ Համամ), որտեղ շարականի հեղինակ համարուող Համամը զղջում եւ ապաշխարում է սեփական եղբոր արիւնը թափելու համար: Համամի կեանքի այս կարեւոր պատումը, հիմնուած վերոնշեալ երկու վկայութիւնների վրայ, ենթադրաբար ներկայացնում է նրա կեանքի յետագայ մանրամասները: Ըստ այսմ՝ Համամը, զղջալով եւ ապաշխարելով, ընդունում է վանական սքեմ՝ Յովհաննէս անունով, եւ կեանքի մնացած մասն անցկացնում վանքում»⁸⁸:

Համամը սպանել է իր եղբորը՝ «այս փուլէ կեանքի համար իր եղբոր արեան պարտքը իր վրայ» առնելով (ըստ Դասխուրանցու), ապա գրել է զղջական մի հոգեւոր երգ: Այդ շարականը, որ վաղուց դարձել է պարականոն⁸⁹, տպագրել է նաեւ Պօղոս խաչատրեանը «Գանձարան Հայ հին բանաստեղծութեան» գրքում՝ «Շարական Համամայ» վերնագրով: Ստորեւ մէջբերում

87 Բարխուդարեան Ա., Արցախի, Ծաքիի եւ Փառիսոսի իշխանութիւնները 9-10-րդ դդ., էջ 66: Նկատենք, սակայն, որ ինչպէս յետագայում պարզուել է Արրախամ Ծափեանի մանրակրկիտ ընթերցման շնորհիւ, Սոփուլուի այս տապանագիրը փորագրուած է Համամ Բարեպաշտից 2-3 դար անց եւ ցրա հետ որեւէ կապ չունի (այն լուի յիշատակում է «ճորտ հասակում» մահացած ոմն «[Հ]ամամ իշխանի», ապա՝ Տէր Փղիպէին, Տէր Պետրոսին ու սրա հայր Դաւիթին): Տէս Ծափեան Ա., Բաքուի քաղաքային թանգարանի հայերէն արձանագրութիւնները, - ԼՀԳ, 1976, հր 6, էջ 89-94,

հմմ. Յակոբեան Ա., Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում, էջ 226:

88 Անանեան Շ., Համամ Արեւելիցի՝ թագաւոր, թե՞ մատենագիր:

89 Որպէս պարականոն տպագրել է Սահակ Ամատունին (Ամատունի Ս., Հին եւ ճոր պարականոն կամ անվաւեր շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 163-164):

ենք գրաբար տարբերակը՝ զուգադիր փոխադրելով արեւելահայերէնի.

Հայր երկնատու,	Հայր երկնատու,
Անկանիւ առաջի անոխակալ ֆո գթութեանդ,	Քո անոխակալ գթութեանն եմ ապաւինում,
Զի մեղօք իմովք բարկացոցի	Քանզի իմ մեղքերով բարկացրի [Քեզ]
Եւ չար առաջի ֆո աւարի.	Եւ չարիք գործեցի Քո առջեւ.
Աղաչեմ զքեզ, ներեա՛ յանցանաց իմոց,	Ների՛ր յանցանքներն իմ, աղաչում եմ Քեզ՝ մոց,
Որ միայնդ ես ողորմած:	Որ Դու ես ողորմածը միայն:
Արք անօրէնք կոչեցին զիս հաղորդիլ արեան մահու.	Անօրէն մարդիկ պարտադրեցին ինձ մեղսակից լինել արեան [ու] մահուան,
Գնացի զնանապարհս ձախակողմանն,	Գնացի ձախակողմնապարհով,
Կատարեցի զչար խորհուրդ նոցայ.	Կատարեցի նրանց չար խորհուրդը.
Աղաչեմ զքեզ, ներեա՛ յանցանաց իմոց,	Ների՛ր յանցանքներն իմ, աղաչում եմ Քեզ՝ մոց,
Որ միայնդ ես ողորմած:	Որ Դու ես ողորմածը միայն:
Մեծ են յանցանք իմ, Տէր,	Մեծ են յանցանքներն իմ, Տէր,

Զոր գործեցի յահէ մահու	Որ գործեցի մահուան անից
Հրամանաւ իսմայելեան բռնատրին,	Հրամանով իսմայելեան բռնատրի,
Երագեցի յեղով զարին եղբարն.	Շտապեցի թափել [իմ] եղբոր արիւնը.
Աղաչեմ զքեզ, ներեա՛ յանցանաց իմոց,	Ների՛ր յանցանքներն իմ, աղաչում եմ Քեզ՝ մոց,
Որ միայնդ ես ողորմած:	Որ Դու ես ողորմածը միայն:
Աստուած, ապաւին եւ յոյս դարձելոյս ի քեզ,	Աստուած, ապաւինն ու յոյսն ես դէպի Քեզ դարձածիս,
Յարենէ փրկեա՛ զիս, Տէր.	Արիւնից փրկի՛ր ինձ, Տէր,
Որպէս թողեր զայն երգողին,	Ինչպէս ներեցիր այն երգողին,
Թո՛ղ եւ ինձ զպարտս մեղուցեալ ֆո ծառայիս.	Ների՛ր եւ իմ՝ ֆո մեղապարտ ծառայիդ գործածը.
Աղաչեմ զքեզ, ներեա՛ յանցանաց իմոց,	Ների՛ր յանցանքներն իմ, աղաչում եմ Քեզ՝ մոց,
Որ միայնդ ես ողորմած:	Որ Դու ես ողորմածը միայն:
Մեղա՛յ, Տէր, մեղա՛յ,	Մեղատու եմ, Տէր, մեղատու եմ,
Մանասէին ձայնի գոչեմ,	Մանասէի ձայնով եմ գոչում,

Ընկալ՝ զիս, մարդասէր, ընդ երանելեացն,	Ընդունի՛ր ինձ, Մարդասէ՛ր, [այն] երանելիների հետ,
Որոց թողան եւ ծածկեցան յանցանքն.	Ում յանցանքները ներուցին ու մոռացուցին.
Աղաչեմ զեզ, ներեա՛լ յանցանաց իմոց,	Ների՛ր յանցանքներն իմ, աղաչում եմ՝ Քեզ՝
Որ միայնդ ես ողորմած:	Որ Դու ես ողորմածը միայն:

Անձնական-կենսագրական ցնցող փաստեր ներկայացնող այս շարականը նոր խօսք էր Հայ Հին գրականութեան պատմութեան մէջ եւ Դավթակ Քերթողի «Ողբ»-ի հետ հերքում է այն պատկերացումը, թէ Հայ Հին գրականութիւնը բացառապէս եկեղեցական-քաղաքական մաքառման գրականութիւն է, աւելին՝ հիմք է տալիս պնդելու, որ Հայ գրականութեան մէջ աշխարհիկացումը՝ վերածնունդը, աւելի վաղ էր սաղմնաւորուել: Ինչպէս նկատել է Հ. Բախչինեանը, «Համամ Արեւելցու այս երգը նորութիւն է Հայ բանաստեղծութեան մէջ, քանի որ առաջին անգամ արծարծում է անձնական թեմատիկան: Հէնց այս պատճառով էլ այն միառժամանակ ընդգրկուելով կանոնական Շարակնոցի մէջ, շատ չանցած դարձել է պարականոն: Պատճառը աւելի քան պարզ է: Օրհներգերում զղջական-ապաշխարական խօսքը ասուել է պաշտող Համայնքի կամ այն մարմնաւորող ընդհանրական ես-ի կողմից՝ առհասարակ մարդկային մեղքերի Համար: Իսկ խնդրոյ առարկայ երգում ապաշխարանքը կոնկրետացուած-անձնաւորուած է, քանի որ առուած է կոնկրետ անձի որոշակի մեղքի հա-

մար: Սա շեղում է օրհներգական աւանդոյթից, բայց նորոյթ ու նորամուծութիւն էր միջնադարի Հայ քերթութեան մէջ»⁹⁰: Աւելին՝ Հ. Բախչինեանը Համամի շարականը համարում է Զ-րդ դարից մեզ հասած միակ օրհներգը («Համամ Արեւելցու երգը, ինչպէս Դավթակ Քերթողի Ողբը, գրուած է իբրեւ օրհներգ»)՝ մերժելով Աս. Մնացականեանի տեսակէտը, թէ այն աշխարհիկ բանաստեղծութիւն է⁹¹:

Եղբօր մահից յետոյ Համամը հաւանաբար թողել է աշխարհիկ կեանքը, դարձել հոգեւորական եւ զբաղուել մատենագրութեամբ. թէեւ Հայագէտներից ոմանք այս հոգեւոր ժառանգութիւնը համարում են նոյնանուն այլ մատենագրի ստեղծագործութիւնը, սակայն մեզ համոզում են Աս. Մնացականեանի Հիմնաւորումները, եւ գտնում ենք, որ թագաւորը եւ մատենագիրը միեւնոյն անձն են:

Ըստ վարդան Արեւելցու՝ Աշոտ թագաւորի եւ Գեւորգ կաթողիկոսի ժամանակակից Համամը հեղինակն է Առակների եւ Քերականի մեկնութեան, թարգմանել է Յոբի «Ո՛վ է դա» գիրքը, Սաղմոսների գրքի մի գլխի օրհնութիւնները եւ այսպէս կոչուած Անբիծ գիրքը: Իսկ Մխիթար Այրիւկանցիին հաստատում է, որ մատենագիր Համամը նոյն ինքը Յովհաննէս Բագրատունին է՝ Առակների եւ Սաղմոսների մեկնութեան հեղինակը: Աշոտ թագաւորի եւ Գեւորգ կաթողիկոսի ժամանակակիցը Համամ Արեւելցի թագաւորն էր, որ միառժամանակ նաեւ Հայ հոգեւոր մշակոյթի գործիչ է՝ բազմաթիւ մեկնութիւնների հեղինակ:

Բացի վերը յիշուած շարականից՝ Համամ Արեւելցու անունով մեզ է հասել հարուստ մատենագրական ժառանգութիւն՝

90 Բախչինեան Հ., Ծարականի գրապատմական ուղիւ, 5-14-րդ դարեր, էջ 140:

91 Բախչինեան Հ., Հայ միջնադարեան բանաստեղծութիւնը, Բու. Ա, էջ 154:

«Մեկնութիւն Առակացն Սողոմոնի»⁹², «Մեկնութիւն Յորայ «Ո՞վ է դա»-ին»⁹³: Համամի անունով պահպանուել է նաեւ Դիոնիսիոս Թրակացու քերականական մի պակասաւոր մեկնութիւն, որը տպագրել է Նիկողայոս Ադոնցը Դիոնիսիոս Թրակացուն նուիրուած իր աշխատութեան մէջ⁹⁴: Դրանից մի հատուած էլ յայտնաբերել է Աս. Մնացականեանը⁹⁵, եւ յիշեալ բնագրերի հաշուառմամբ Հ. Քեօսէեանը տպագրել է մեկնութեան բնագիրը⁹⁶:

Յայտնի է նաեւ «Մեկնութիւն Դիոնիսիոսի Արիսպագացոյ է» վերտառութեամբ անտիպ երկը, որը պահուում է Փարիզի Ազգային գրադարանում:

Համամի անունով մատենագիրները յիշատակուել են նաեւ մի քանի կորած գործեր՝ «Մեկնութիւն Սաղմոսաց», «Մեկնութիւն Սաղմոսին, որ է Ամբիծք» եւ մի պատմագրական երկ:

Համամը ենթադրաբար հեղինակ է նաեւ «Կարգաւորութիւն Սաղմոսաց» խորագրով երաժշտա-բնագրագիտական բնոյթի մի աշխատութեան՝ եկեղեցական ծէսի մէջ սաղմոսների կիրառման սահմանների ճշգրտման եւ երաժշտական կարգաւորման մասին:

Համամ Արեւելցու մահուան թուակաւորը ստոյգ յայտնի չէ: Մի աւանդութեան համաձայն՝ նա իր կնոջ հետ թաղուած է Արցախի Վարանդայ գաւառի Աւետարա-

նոց գիւղում (նախկինում՝ Ասկերանի շրջանի Չանախչի գիւղ): 1241 թ. Համամի գերեզմանի մաշուած քարը «ոմն Մասան» նոր քար է գցել, որի կողքի տապանին նկարուած է նաեւ կնոջ նկարը՝ առանց արձանագրութեան:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մինչ Հայագիտութիւնը սկսած 1784 թուականից զբաղուում է Համամ Արեւելցու անձի եւ ստեղծագործութեան քննութեամբ, երկու դար անց՝ 20-րդ դարի կէսերին, ադրբեջանցի պատմաբան Զ. Բունիատովը առանց խորանալու հարցի գիտական դրուածքի մէջ՝ Համամ Արեւելցուն իր գրքում պարզապէս յիշատակում է որպէս թուրքի⁹⁷: Այս առումով աւելի զգուշաւոր է Ֆ. Մամեդովան, որը շեշտում է Համամի՝ միմիայն Ադուանից թագաւոր լինելու իրողութիւնը⁹⁸:

Մինչդեռ Համամ Արեւելցու Հայագրի լինելը հաստատուում է բազմաթիւ հանրայայտ փաստերով, որոնք տարբեր առիթներով շրջանառուել են Հայագիտութեան մէջ:

1. Համամ Արեւելցուն իրենց երկերում յիշատակել են Հայ մատենագիր Մովսէս Դասխուրանցին, 10-րդ դարի Հայոց կաթողիկոսներ Յովհաննէս Դրասխանակերտցին ու Անանիա Մոկացին, 10-11-րդ դարի Հայ պատմիչ Ստեփաննոս Տարօնեցի Ասողիկը, 13-րդ դարի Հայ մատենագիրներ Վարդան Արեւելցին, Մխիթար Այրիվանեցին, Ստեփաննոս Օրբէլեանը:

92 Առաջին անգամ տպագրուել է 1994 թ. Մխիթար քնն. Սարիբեկեանի աշխատասիրութեամբ, «Աստուածաշնչական մեկնութիւններ» շարքի մէջ: Երկի բնագիրը անգլերէն թարգմանել է Ռ. Թոմսոնը: Տե՛ս Hamam Comentary on the Book of Proverbs, Edition of the Armenian Text, English Translation, Notes and Introduction by R. W. Thomson (Hebrew University Armenian Studies - 5), Peeters, Leuven, 2005: Առաջին տպագրի եւ ՄՄ ԲՊ 1151 ձեռագրի համեմատութեամբ Յակոբ Քեօսէեանը կազմել է գիտա-քննական բնագիր, որը տպագրուել է «Մատենագիրք Հայոց»-ի Թ. հատորում (էջ 453-521):

93 Տե՛ս Մատենագիրք Հայոց, հտ. Թ, էջ 522-533:

94 Աղոնց Ն., Արուեստ Դիոնիսեայ քերականի եւ հայ մեկնութիւնը մորիմ, Պետրոգրադ, 1915, էջ 251-285:

95 Մնացականեան Աս., Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջը, էջ 136:

96 Տե՛ս Մատենագիրք Հայոց, հտ. Թ, էջ 534-553:

97 Бунятов З. М., Обзор источников по истории Азербайджана, Баку, 1964, էջ 10-11:

98 Мамедова Ф., Кавказская Албания и Албаны, էջ 394-396:

2. Սկսած դեռեւս 1784 թուականից, այսինքն՝ Հ. Միքայէլ Չամչեանցից, մինչեւ մեր օրերում տպագրուած «Մատենագիրք Հայոց Հիմնարար ժողովածոն», հայագիտութիւնը քննութեան է արժանացրել Համամի անձը եւ ստեղծագործութիւնները:

3. Մինչ 20-րդ դարի կէսերին կը ծլարձակէր Զ. Բունիաթովի կեղծ տեսութիւնը՝ սկսած 18-րդ դարից հայագէտներ Մ. Չամչեանցը, Ս. Սոմալեանը, Գ. Զարբհանլեանը, Ե. Դուրեանը, Կ. Կոստանեանցը, Մ. Բարխուդարեանցը, Ղ. Ալիշանը, Յ. Մարկուարտը, Հ. Աճառեանը, Ն. Ադոնցը, Գ. Զահուկեանը, Աշ. Յովհաննիսեանը անդրադարձել էին Համամ Արեւելցուն՝ կատարելով ուշագրաւ եւ հաստատուն պատմաբանասիրական եզրայանգումներ:

4. Համամ Արեւելցու շարականը կառուցուած է հայատառ «ՀԱՄԱՄ» ծայրակապով, որը բացառում է շարականի թարգմանութիւն լինելը:

5. Համամ Արեւելցու Քերականութեան մեկնութեան մէջ կան հայոց այբուբենի ծայրակապով հատուածներ, որը եւս հաստատում է հայագէտների իրաւացիութիւնը:

6. Հ. Բախչինեանը նկատել է, որ «Համամ Արեւելցու երգը, ինչպէս Դաւթակ Քերթողի Ողբը, գրուած է իբրեւ օրհներգ», որը հայ հոգեւոր բանաստեղծութեան տեսակ է:

7. Աս. Մնացականեանը բերել է համոզիչ ապացոյցներ՝ վկայակոչելով Մխիթար Այրիվանեցուն, Յովհաննէս Դրասխանակերտցուն, ինչպէս նաեւ 14-րդ դարում ընդօրինակուած՝ Մաշտոցեան Մատենադարանի հ. 2152 ձեռագրից մի խօսուն հատուած, որոնք հիմնաւորապէս ապացուցում են, որ Համամ թագաւորը նոյն ինքը հայ մատենագիրն է:

8. Հայ հին գրականութիւնը հայոց ազնուականութեան գրականութիւնն է: Յայտնի են հայոց թագաւորներ ու իշխաններ, որոնք ստեղծագործել են, ինչպէս՝ Վրոյր բանաստեղծը, Արտաւազդ Բ. թագաւորը, Աշոտ պատրիկ Բագրատունին, Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունին, Արցախի իշխան Եսայի Ապու-Մուսէն, Գագիկ Բ. Բագրատունի թագաւորը, Կիլիկիայի թագաւոր Լեւոն Գ. ն եւ այլն: Համամ Արեւելցին եւս այս շարքում է՝ որպէս Հայոց Արեւելից կողմանց թագաւոր:

9. Ի վերջոյ, Համամն Արեւելցի է անուանուում, պարզ է՝ որովհետեւ Հայոց Արեւելից կողմանքը Հայաստանի արեւելքում է: Եթէ Համամն ազգութեամբ աղուան լինէր, ապա հէնց այդպէս էլ կ'անուանուէր, այլ ոչ թէ՝ Արեւելցի⁹⁹:

99 Համամ Արեւելցու արքայատոմը Տարօնի Բագրատունիների իշխանատոմից սերուած լինելու մասին տեսակէտի բոլոր փաստարկները ամփոփուած տե՛ս Յակոբեան Ա., Արքայատոմներն ու

իշխանատոմները Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում, էջ 186-193: